Իսկ այս են պատճառք լրմանցն՝ զոր ամէն ՂԵ (95) ամի սղալին Հռոմք ի սուրբ զատկին, որ է լրում ապրիլի Զ խորանին իննեւտասներեակացն. զի յորժամ եդին զհինգհարիւրեակն՝ Իռիոն ավարիկ գիտնականն Հռոմոց՝ ոչ կոչեցաւ ի ժողովն. և յորժամ եկն ի հեռի ճանապարհէն յոր երթեալ էր, մախացեալ ընդ իրսն ընդ այն, և զապրիլի վեց՝ հինգ ասաց և ելից զԿոստանդինուպօլիս[1]: Իսկ յապրիլի Զ յայնմ ամի ի կիրակի հանդիպի. բայց մեք ի միւս կիրակի անցուցանեմք զզատիկն. իսկ Ե (հինգերորդ) օրն շաբաթ լինի, և նոքա զլրումն ի տեղն առնեն, և ուտեն զխաչելութեան շաբաթն. Պատրաստ կացէք որ չի սխալիք, դուք այլ հետ նոցա զատիկ առնէք: Ի հին գիրք մի այսպէս գրած էր, և մեք ձեզ այլ ծանուցաք. որ յամէն ՂԵ տարի՝ կու մոլորին տասն ազգ, բայց ի Հայոց և յԱսորոց. թէ չէք հաւատար, նայ զխառնայփընտուրին[2] զտարէգիրն համբրեցէք, և տեսէք որ կենայ գիրն[3] Շ կու գայ յայսկից ՂԵ տարի, և կրկին ՂԵ տարոյ յետև կրկին Շայ կու գայ, և երեքկին ՂԵ տարոյ յետև ՈՅ (Ո) կու գայ նահանջն ավլի, ապրիլի ԺԳ զատիկ կու լինի. և ի տումարն այլ գտայք, որ երկու անգամ առանց նահանջի կու մոլորին, և յետինն նահանջով. և յամէն մոլորած տեղն գրած է, թէ ցայսմ ամի մոլորին ցոյնքն. տեսէք և զգուշ կացէք: Հռոմի և Ֆռանկի հետ դրեր եմք խառնայփընտուրով, յամէն ՂԵ տարի զոր կու գայ նոցա զատիկն և Հայոցն ի ԺԳ, և յետոյ ԲՃ և ԽԶ (246) տարի չեն մոլորիր. հինգհարիւրեակին մէջն՝ չորս տարպայ կու մոլորին, երեք առանց նահանջի և մէկն նահանջով. այս տարինս յետև՝ երեք ՂԵին այլ կու մոլորին: Դուք այլ ամէն. գիրք գրեցէք, որ ի մեր յանցմանն յետև[4] մեր որդիքն այլ իմանան և հեռոյ[5] հռոմինչ չմոլորին, և զհայրապետաց անէծքն ընդունին: Այլ բաւ է ձեր վեհ իմաստութեանցդ. ողջ լերուք ի Տէր, Լուսաւորչին փառքն: Փառք Աստուծոյ:

Գրեցաւ գիրս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սուրբ Յակոբայ. Թվ. ՌԼԸ, Նոյեմբեր Ը:

1. Պակսի բառ մի խովսրիմ կամ հայրախովսրիմ:
2. Թուին Աղիւսակք տումարագրոց:
3. Կիրակագիրն:
4. Այսինքն, յետ մեր մահուանս:
5. Թերեւս՝ յետոյ, կամ հետ, Հռոմոց հետ: